

Ակնցի, Փերուազեանց տնէն, Զմիւռնիոյ Արքեպիսկոպոս Առաջնորդ. 1736ին Ղենետիկ գնաց, կաթողիկեայ հաւատքն ընդունեցաւ, Մխիթարեանց քով հաստատուեցաւ իբրեւ ձեռնադրիչ Եպիսկոպոս, 1737ին վանքի Եկեղեցւոյն Ս. Անտոնի խորանը շինեց մարմարէ, եւ 24 Գեկտ. 1757ին վախճանելով՝ նոյն խորանին առջեւ թաղուեցաւ: (Ալիշան, 343, Տաշեան, 470ա. Թորոսեան, անդ, 364—5:)

Հոռոմէն ուրիշ երկու նամակ եւս գրած է առ Մխիթար Աբբա հայրն, որոնց առաջնոյն մէջ վերոյիշեալ սրբացուցման ստորագրութիւնը կ'ընէ եւ կը ծանուցանէ թէ ի մօտոյ Ղենետիկ պիտի վերադառնայ: Այս երկու նամակներուն օրինակները կը դնենք:

*Յզակիսնասպէս գերբնտիր գտանեցելոյ՝ Հայրութեանն արժանապատուոյ մատուցի լոյսակաթ սիրառատութեամբ ողջոյն փրկչառանդ:*

Առ մեզ նուիրեցեալ ողջոյնդ հայրական ի ձեռն յուլիսի 2 գրեցեալ պարէտիդ՝ ուրախութեամբ ընկալաք. եւ հետեւեցելոց զգացուցմանդ՝ ըստ գրելոյդ տեղեկացաք, ելով գոհունակ զբարեբարոյ մարդասիրութենէդ, զոր դէպ առ մեզ ցուցանելոյ ոչ բնաւ երբէք վերջանաս: Զպատրիարքին Հայոց զպառնալիսն հալածանաց, ծանեալ էաք, եւ ծանեաք, որոյ վասն եւս՝ ի կասկածի վարանման կայ հոգացողութիւնն մտաց իմոց, թէ գուցէ այդպիսիք որոտմանց ճայթմունք ի վախճանի զարիւնս անձրեւիցեն, ի վայ եւ ի եղուկ ազգի մերոյ տառապեցելոյ: Նաեւ զփարատեցմանէ դեղնացաւ կրիցդ՝ զոր գրեցեր ի հոգի եւ ի մարմին բերկրեցայ. եւ յուսամ թէ մինչեւ ցարդ՝ ըստ բոլորին բնաջնջեցեալ իցէ՝ բարեխօսութեամբ